ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-25/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 17.07.2025թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Թևոսյան, Մ. Անտոնյան, Վ. Անդրեասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-25/1 ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու առաջարկի քննարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի հրավերի տեքստում փոփոխություն կատարելու մասին

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվեց, որ առաջարկվում է ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն՝

1. Տեխնիկական բնութագրի 4-րդ բաժնի /Ներքին աուդիտի ծառայություն մատուցող կատարողի նկատմամբ ընդհանուր պահանջներ/ բ) պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«բ) Կատարողի՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները պետք է բավարարեն ՀՀ ֆինանսների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 516-Ն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված Հավելված 2-ի 1-ին կետով սահմանված պահանջների, համաձայն որի՝ ««Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանրային հատվածի կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներքին աուդիտի իրականացման ծառայություններ ձեռք բերելու նպատակով կարող են պատվիրակել հրավիրված անձանց՝ աուդիտորական կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն), որոնք ունեն ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեության առնվազն 3 տարվա փորձ և առնվազն երեք աշխատող, ովքեր բավարարում են հետևյալ պահանջները՝

1) ունեն Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում,

2) աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) ունեն մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ,

3) համատեղությամբ չեն աշխատում այլ ներքին և արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող կազմակերպություններում:»»

Հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, որոշեց.

- Հաստատել թիվ ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-25/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեքստը նոր խմբագրությամբ և հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին կատարել հրավերի փոփոխություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ **Կարեն Հովհաննիսյան**

անդամներ՝ _____ **Սոնա Թևոսյան**

_____ **Մերի Անտոնյան**

_____ **Վահրամ Անդրեասյան**

քարտուղար՝ _____ **Սիրանուշ Նազարյան**